

**ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի դեկտեմբերի 7-ի 92/106/ԵՏՀ հրահանգ**

**Անդամ պետությունների միջև ապրանքների համակցված տրանսպորտի որոշակի տեսակների համար ընդհանուր կանոններ սահմանելու մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը եւ, մասնավորապես, դրա հոդվածներ 75 եւ 84(2)–ը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ «Անդամ պետությունների միջև ապրանքների ճանապարհով/երկաթուղով համակցված փոխադրման որոշակի տեսակների համար ընդհանուր կանոններ սահմանելու մասին» Խորհրդի 1975 թվականի փետրվարի 17–ի 75/130/ԵՏՀ հրահանգում (4) մի քանի անգամ կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ. քանի որ հետագա փոփոխությունների դեպքում Հրահանգը պետք է լրամշակվի՝ հստակություն ապահովելու նպատակով,

քանի որ ներքին շուկայի գործունեության հետեւանքով ծանրաբեռնվում է երթեւեկությունը. քանի որ Համայնքը պետք է անի անհրաժեշտ ամեն ինչ՝ ապահովելու համար տրանսպորտային միջոցների օպտիմալ կառավարումը՝ ի շահ բոլոր քաղաքացիների, որը նշանակում է համակցված տրանսպորտի օգտագործում,

քանի որ ճանապարհներին խցանումների, շրջակա միջավայրի եւ ճանապարհային անվտանգության հետ կապված աճող խնդիրները, հանրության շահերից ելնելով, խթանում են համակցված տրանսպորտի հետագա զարգացումը՝ որպես ճանապարհային տրանսպորտի այլընտրանք,

քանի որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ հնարավոր դարձնելու համար տրանսպորտի մեթոդների զարգացումը եւ հետագա բարելավումը տրանսպորտային ձեւերի ինտերմոդալության եւ տրանսպորտի օպերատորի ու օգտագործողների հատուկ միջոցների եւ պահանջների հիման վրա. քանի որ նման միջոցները պետք է ներառեն տրանսպորտի

համակցված ձեւերը՝ միացնելով ճանապարհային եւ մյուս տրանսպորտային միջոցները՝ երկաթուղին, ներքին ջրուղիների եւ ծովային տրանսպորտը,

քանի որ ավելի մեծ աջակցություն անհրաժեշտ կլինի համակցված տրանսպորտի համար՝ ճանապարհային տրանսպորտի ոլորտում դեռ առկա բոլոր քանակային սահմանափակումներից ազատելու եւ տարբեր վարչական արգելքները վերացնելու միջոցով.

քանի որ համակցված տրանսպորտի մեթոդները, որոնք հանգեցնում են ճանապարհային խցանումների իրական կրճատմանը, ինչպիսին ազատականացումն է, պետք է վերաբերի սահմանափակ տարածությամբ ուղերթին,

քանի որ համակցված տրանսպորտի գործունեության սկզբնական եւ վերջնական փուլերի ազատականացումը պետք է ներառի համակցված փոխադրումները՝ օգտագործելով ծովային երթուղիները՝ պայմանով, որ ծովային ուղերթը համակցված տրանսպորտի գործունեության կարելու մաս է,

քանի որ Հանձնաժողովը պետք է հաշվետվություն ներկայացնի յուրաքանչյուր երկու տարին մեկ՝ սկսած 1995 թվականի հուլիսի 1-ից, սույն Հրահանգի կիրառման օրը,

քանի որ համակցված տրանսպորտի զարգացումը կխթանվի նաեւ սիմուլյացիոն միջոցներով, եւ քանի որ այդ իսկ պատճառով նպատակահարմար է նվազեցնել առեւտրային տրանսպորտային միջոցների օգտագործման կամ տնօրինման նկատմամբ կիրառվող հարկերն այնքանով, որ դրանք իրականացվում են երկաթուղով եւ չկիրառել պարտադիր սակագները բեռնափոխադրումների նախնական եւ վերջնական փուլերի նկատմամբ,

քանի որ համակցված փոխադրման ժամանակ սեփական հաշվին փոխադրումների մատչելիությունը պետք է խթանել,

քանի որ սույն Հրահանգը չպետք է ազդի անդամ պետությունների ազգային օրենսդրությունում նրանց պարտավորությունների վրա փոխադրումների համար ժամանակահատվածների եւ հրահանգների իրականացման վրա, որը նախատեսում է լրամշակված տարբերակը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

1. Սույն Հրահանգը կիրառվում է համակցված տրանսպորտի գործունեության նկատմամբ՝ առանց հակասելու թիվ 881/92 (5)ԵՏՀ) Կանոնակարգին.

Սույն Հրահանգի նպատակներով, «համակցված տրանսպորտ» նշանակում է անդամ պետությունների միջև ապրանքների փոխադրումը, որտեղ բեռնատարները, կցորդները կամ կիսակցորդները, տրակտորները, հանովի թափքը կամ 20 կամ ավելի ոտնաչափ կոնտեյներն օգտագործում են ճանապարհը ուղերթի սկզբնական եւ վերջնական փուլերում ու մյուս փուլերում, երկաթուղին կամ ներքին ջրուղիները, կամ ծովային ծառայությունները, եթե այդ հատվածն իր սահմանային ուղիղ գծով գերազանցում է 100 կիլոմետրը եւ կազմում է ուղերթի ճանապարհային տրանսպորտի սկզբնական ու վերջնական փուլերը.

Նախնական փուլի համար ապրանքների բեռնման կետերի եւ մոտակա համապատասխան երկաթուղային բեռնման կայանի միջև ու նախնական փուլի համար մոտակա համապատասխան երկաթուղային բեռնաթափման կայանի եւ ապրանքների բեռնաթափման կետերի միջև կամ

– բեռնման կամ բեռնաթափման ներքին ջրերի նավահանգիստներից ուղիղ գծով 150 կիլոմետրը չգերազանցող շառավիղի սահմաններում:

### *Հոդված 2*

Յուրաքանչյուր անդամ պետություն, մինչեւ 1993 թվականի հուլիսի 1-ը, պետք է ազատականացնի 1-ին հոդվածում նշված՝ համակցված տրանսպորտի գործունեությունը բոլոր քվոտային եւ լիցենզավորման համակարգերից:

### *Հոդված 3*

Վարձատրության կամ պարգեատրման դիմաց համակցված տրանսպորտի դեպքում, փոխադրման մասին փաստաթուղթը, որն առնվազն բավարարում է «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի (6) 79-րդ հոդվածի (3) կատարումն ապահովող՝ Խորհրդի 1960 թվականի հունիսի 27-ի «Փոխադրման վճարներում եւ պայմաններում կիրառվող խտրականությունը վերացնելու մասին» թիվ 11 կանոնակարգի 6-րդ հոդվածում սահմանված պահանջները, պետք է նաեւ սահմանի

երկաթուղով փոխադրման դեպքում երկաթուղային բեռնման եւ բեռնաթափման կայանները կամ ներքին ջրային ճանապարհով փոխադրման դեպքում ներքին ջրերի բեռնման կամ բեռնաթափման կայանները կամ ծովային փոխադրման ժամանակ՝ ծովային բեռնման եւ բեռնաթափման կայանները: Այս մանրամասները պետք է գրառվեն նախքան տրանսպորտային գործունեության իրականացումը եւ պետք է հաստատվի երկաթուղային կամ նավահանգստի մարմինների կողմից սահմանված դրոշմանիշի միջոցով երկաթուղային կայաններում կամ ներքին ջրերի, կամ ծովային նավահանգիստներում, երբ երկաթուղով կամ ներքին ջրերով, կամ ծովով իրականացվող ուղեւորության մասն ավարտվում է:

#### *Հոդված 4*

Անդամ պետությունում հիմնադրված բոլոր բեռնափոխադրողները, ովքեր բավարարում են անդամ պետությունների միջեւ ապրանքների փոխադրման շուկայի գործունեության եւ մուտքի պահանջները, իրավունք ունեն իրականացնելու անդամ պետությունների միջեւ համակցված փոխադրման գործունեության համատեքստում համակցված տրանսպորտային գործունեության մաս կազմող ճանապարհային փոխադրման նախնական եւ (կամ) վերջնական փուլերը, եւ որոնք կարող են ներառել կամ չներառել սահմանագծի հատումը:

#### *Հոդված 5*

1. Առաջին դեպքում յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ մինչեւ 1995 թվականի հուլիսի 1-ը, Հանձնաժողովը պետք է Խորհուրդ հաշվետվություն ներկայացնի հետեւյալի մասին՝

- համակցված տրանսպորտի տնտեսական զարգացումը,
- այս ոլորտում Համայնքի իրավունքի կիրառումը.
- անհրաժեշտության դեպքում հետագա միջոցների սահմանումը՝ համակցված տրանսպորտի գործունեությունը խթանելու նպատակով:

2. 1-ին պարբերությունում նշված հաշվետվությունը կազմելիս, Հանձնաժողովին պետք է աջակցեն անդամ պետության ներկայացուցիչները՝ այս նպատակով անհրաժեշտ տեղեկությունները հավաքագրելու համար:

Հաշվետվության մեջ պետք է վերլուծվեն տեղեկությունները եւ վիճակագրական տվյալները մասնավորապես, հետեւյալի վերաբերյալ՝

– համակցված տրանսպորտի գործունեությունում օգտագործվող տրանսպորտային ուղիները.

– մեքենաների թիվը (ավտոգնացքը հաշվվում է որպես մեկ մեքենա), հանովի թափքերը եւ կոնտեյներները, որոնք փոխադրվում են տարբեր տրանսպորտային ուղիներով.

– փոխադրվող ծավալները.

– իրականացված ծառայություններ՝ արտահայտված տոննա/կիլոմետրով :

Հաշվետվության մեջ, անհրաժեշտության դեպքում, լուծումներ է առաջարկվում համակցված տրանսպորտի ոլորտում նման տեղեկությունների հերթական բարելավման եւ իրավիճակի հերթական բարելավման համար:

### *Հոդված 6*

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ 3-րդ պարբերությունում նշված հարկերը կիրառվում են ճանապարհային մեքենաների (բեռնատարներ, տրակտորներ, կցորդներ կամ կիսակցորդներ) նկատմամբ, երբ համակցված փոխադրման երթուղին կրճատվում կամ փոխհատուցվում է ստանդարտ գումարում կամ երկաթուղով նման մեքենաների իրականացրած ճանապարհին համամասնորեն՝ Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո նախատեսված սահմաններում եւ պայմանների ու կանոնների համաձայն:

Առաջին պարբերությունում նշված փոխհատուցման կրճատումները շնորհվում են այն պետության կողմից, որտեղ գրանցված են ավտոմեքենաները՝ պետության սահմաններում երկաթուղով իրականացված ուղեւորությունների հիման վրա:

Անդամ պետությունները, այնուամենայնիվ, կարող են շնորհել այս նվազեցումները կամ փոխհատուցումներն այն երկաթուղով իրականացված ուղեւորությունների հիման վրա, որոնք մասամբ կամ ամբողջությամբ իրականացվում են մեքենաները գրանցող անդամ պետությունից դուրս:

2. Չհակասելով Համայնքի մակարդակով առեւտրային նպատակով օգտագործվող մեքենաների համար ազգային հարկային համակարգերի հնարավոր վերակազմակերպումից բխող դրույթներին, այն մեքենաները, որոնք բացառապես օգտագործվում են ճանապարհային փոխադրման համար համակցված տրանսպորտով՝

միջանկյալ կամ վերջնական փոխադրման դեպքում, կարող են ազատվել 3-րդ պարբերությունում նշված հարկերից, եթե դրանք հարկվում են առանձին:

3. 1-ին պարբերությունում նշված հարկերը հետեւյալն են՝

Բելգիա՝

taxe de circulation sur les véhicules automobiles/verkeersbelasting op de autovoertuigen,

Դանիա՝

vaegtafgift af motorkoeretoer mv,

Գերմանիա՝

Kraftfahrzeugsteuer;

Ֆրանսիա՝

taxe spéciale sur certains véhicules routiers;

Հունաստան՝

ὁΎεϋ εῶεῖῖοεῖῖσάὸ áῶῖééíῖῶύ;

Իսպանիա՝

ա) impuesto sobre actividades económicas,

բ) impuesto sobre vehículos de tracción mecánica;

Իռլանդիա՝

vehicle excise duties;

Իտալիա՝

ա) tassa automobilistica,

բ) addizionale del 5 % sulla tassa automobilistica,

Լյուքսեմբուրգ՝

taxe sur les véhicules automoteurs;

– Նիդերլանդներ՝

motorrijtuigenbelasting;

Պորտուգալիա՝

ա) imposto de camionagem,

բ) imposto de circulação;

Միացյալ Թագավորություն՝

vehicle excise duties,

### *Հոդված 7*

Եթե կցորդը կամ կիսակցորդը, որը պատկանում է իր միջոցների հաշվին փոխադրումն իրականացնող կազմակերպությանը, փոխադրումը վերջին փուլում իրականացրել է տրակտորով, որը պատկանում է վճարի կամ պարգեատրման դիմաց փոխադրումն իրականացնող կազմակերպությանը, ապա այդ փոխադրման գործունեությունն ազատվում է 3-րդ հոդվածում սահմանված փաստաթուղթը ներկայացնելու պահանջից. Այնուամենայնիվ, պետք է ներկայացնել երկաթուղով, ներքին ջրերով կամ ծովով իրականացված փոխադրումը վկայող մեկ այլ փաստաթուղթ:

### *Հոդված 8*

Համակցված փոխադրման գործունեության մաս կազմող ճանապարհային փոխադրման նախնական եւ վերջնական փուլերն ազատվում են պարտադիր սակագնային պլաններից:

### *Հոդված 9*

Եթե, որպես փոխադրման գործունեության մաս, փոխադրումներ իրականացնող կազմակերպությունն իրականացնում է բեռնափոխադրումների նախնական փուլն իր միջոցներով Խորհրդի «Ավտոճանապարհային բեռնափոխադրումների որոշ տեսակների ընդհանուր կանոնների սահմանման մասին» 1962 թվականի հուլիսի 23-ի առաջին հրահանգի իմաստով, ապրանքներն ստացող կազմակերպությունը կարող է, անկախ նշված հրահանգում սահմանված հասկացությունից, իր միջոցներով իրականացնել բեռնափոխադրման վերջնական փուլը՝ ապրանքներն իրենց առաքման վայր հասցնելով

տրակտորի միջոցով, որը պատկանում է իրեն, գնել է տարածամկետ պայմաններով կամ վարձակալել է «Ավտոճանապարհային բեռնափոխադրումների համար առանց վարորդների վարձով վերցվող տրանսպորտային միջոցների օգտագործման մասին» Խորհրդի 1984 թվականի դեկտեմբերի 19-ի 84/647/ԵՏՀ հրահանգի համաձայն (8), եւ որը վարում են իր աշխատողները, նույնիսկ եթե կցորդը կամ կիսակցորդը գրանցված կամ վարձակալված է ապրանքների փոխադրումն իրականացնող կազմակերպության կողմից:

Համակցված փոխադրման ժամանակ նախնական ճանապարհային փոխադրումը, որը փոխադրումներ իրականացնող կազմակերպությունն իրականացնում է տրակտորով, որը պատկանում է իրեն, գնել է տարածամկետ պայմաններով կամ վարձակալել 86/647/ԵՏՀ հրահանգի համաձայն, եւ որը վարում են իր աշխատողները, անկախ այն հանգամանքից՝ կցորդը կամ կիսակցորդը գրանցված է կամ վարձակալվել է ապրանքներն ստացող կազմակերպության կողմից, պետք է, անկախ 1962 թվականի հուլիսի 23-ի Հրահանգից, համարվի նաեւ իր միջոցներով փոխադրման գործունեություն, եթե ճանապարհային փոխադրման վերջնական փուլը, վերջին հրահանգի համաձայն, իրականացվել է իր միջոցների հաշվին ստացող կազմակերպության կողմից:

#### *Հոդված 10*

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը մինչեւ 1993 թվականի հուլիսի 1-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն ազգային իրավունքի հիմնադրույթները, որոնք ընդունվում են իրենց կողմից սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

#### *Հոդված 11*

1. 75/130/ԵՏՀ հրահանգը սույնով ուժը կորցրած է ճանաչվում՝ չսահմանափակելով անդամ պետությունների՝ հավելվածի Ա մասում սահմանված հրահանգների փոխատեղման եւ



իրականացման ժամանակային սահմանափակումներին վերաբերող պարտավորությունները:

2. Ուժը կորցրած ճանաչված հրահանգին արված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին արված հղումներ եւ ընթերցվում են հավելվածով սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

### Հոդված 12

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: Կատարված է Բրյուսելում 1992 թվականի դեկտեմբերի 7-ին: Խորհրդի կողմից՝

Նախագահ Զ. Մակ-գրեգոր

1) ՊՏ թիվ L C 282, 30. 10. 1992թ., էջ 8 (2) 1992 թվականի նոյեմբերի 20-ին ներկայացված եզրակացությունը (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): 3) 1992 թվականի նոյեմբերի 24-ին ներկայացված եզրակացություն (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում) 4) ՊՏ թիվ L 48, 22.02. 1975թ., էջ 31: Թիվ 881/92 (ԵՏՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 95, 09. 04. 1992թ., էջ 1): 5) «Համայնքի շրջանակներում դեպի անդամ պետության տարածք կամ անդամ պետության տարածքից կամ մեկ, կամ մի քանի անդամ պետությունների տարածքով տարանցմամբ իրականացվող՝ ավտոճանապարհային բեռնափոխադրումների շուկա մուտք գործելու մասին» Խորհրդի 1992 թվականի մարտի 26-ի թիվ 881/92 (ԵՏՀ) կանոնակարգ (ՊՏ թիվ L 95, 09. 04. 1992թ., էջ՝ 1) 6) ՊՏ թիվ 52, 16. 08. 1960թ., էջ 1121/60. 7) ՊՏ թիվ 70, 06. 08. 1962թ., էջ՝ 2205/62: Վերջին անգամ թիվ 881/92/ԵՏՀ կանոնակարգով փոփոխված (ՊՏ թիվ L 95, 09. 04. 1992թ., էջ 1): 8) ՊՏ թիվ L 335, 22.12.1984թ., էջ 72: Փոփոխությունը կատարված է թիվ 90/398/ԵՏՀ հրահանգով (ՊՏ թիվ L 202, 31.07.1990թ., էջ 46): 9) Ներառյալ այն փոփոխող ակտերը, մասնավորապես՝ 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտի համապատասխան դրույթը եւ 79/5/ԵՏՀ, 82/3/ԵՏՀ, 82/603/ԵՏՀ, 86/544/ԵՏՀ եւ 91/224/ԵՏՀ հրահանգները:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՄԱՍ Ա

#### **Ազգային իրավունքում փոխատեղման եւ կիրառման ժամկետներ**

Փոխատեղման եւ իրականացման համար Հրահանգի ժամանակահատվածը 75/130/ԵՏՀ (ՊՏ թիվ L 48, 22. 02. 1975թ., էջ 31) 1975 թվականի հունիսի 30 79/ 5/ԵՏՀ (ՊՏ թիվ L 05, 09. 01. 1979թ., էջ 33) 1979 թվականի հուլիսի 1-ի 82/ 3/ԵՏՀ (ՊՏ թիվ L 05, 09. 01. 1982թ., էջ 12) - 82/603/ԵՏՀ (ՊՏ թիվ L 247, 23. 08. 1982թ., էջ 6) 1983 թվականի ապրիլի 1-ի 86/544/ԵՏՀ (ՊՏ թիվ L 320, 15. 11. 1986թ., էջ 33) 1987 թվականի հուլիսի 1-ի 91/224/ԵՏՀ (ՊՏ թիվ L 103, 23. 04. 1991, էջ 1) 1992 թվականի հունվարի 1:

### ՄԱՍ Բ

#### **Համեմատական աղյուսակ**

Սույն Հրահանգ, թիվ 75/130/ԵՏՀ հրահանգ, Հոդված 1, Հոդված 1, Հոդված 2, Հոդված 2, Հոդված 3, Հոդված 3, Հոդված 4, Հոդված 6, Հոդված 5, Հոդված 7, Հոդված 6, Հոդված 8, Հոդված 7, Հոդված 9, Հոդված 8, Հոդված 11, Հոդված 9, Հոդված 12

Հոդված 10

- Հոդված 11 - Հոդված 12 - Հոդված 13, հավելված -